ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների տնտեսական մրցակցության պաշտպանության պահանջները

1. ՌԱՀ-ի գործունեության ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~տնտեսական մրցակցության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
2. Ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման շրջանակներում գլխավոր կատարողը (կատարողը) պարտավոր է պետական պատվիրատուին ներկայացնել տեղեկություն մատակարարների (կատարողների, կապալառուների) կողմից նյութերի, համալրող սարքավորումների, սարքավորումների, հումքի, ինչպես նաև աշխատանքի (ծառայության) գնային բոլոր բարձրացումների մասին, եթե առաջարկվող գինը ավելի քան 5%-ով գերազանցում է այն գինը, որը հաշվարկված է՝ հաշվի առնելով որոշված գների ինդեքսը:
3. Ռազմական պետական պատվերի կատարման շրջանակներում կատարողի կողմից նյութերի, համալրող սարքավորումների, հումքի, աշխատանքի (ծառայության) գնի բարձրացման դեպքում մատակարարը պարտավոր է գնի բարձրացման պահից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնել պետական պատվիրատուին՝ վերջինիս կողմից հաստատված ձևին համապատասխան: